



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



2021

**ՏՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ**

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՈՒՄ-----3
- ՏՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ-----8
- ՆՈՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՎ ՆԵՐԴՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ-----11
- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ebuh համակարգ)---12
- ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅ-----16
- ԳՈՎԱԶԴ ԵՎ ԴԻԶԱՅՆ-----22
- ՏՏ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ (ԱՌԴԻՏԻ
ԳՈՐԾԸՆԹԱՅ)-----25



ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՈՒՄ

SS կենտրոնի կարևորագույն առաքելություններից է համալսարանի կրթական տեխնոլոգիաների մշտական զարգացմանն ուղղված գործունեության իրականացումը: Այդ նպատակով հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.




Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակ

Հաշվետու տարում համակարգի ակտիվ օգտատերերի թիվը կազմում է **4011**, գրանցվել են նաև հեռակա ուսուցման համակարգի ուսանողները: Համավարակի ընթացքում ավելի մեծ կիրառում է ստացել հեռավար ուսուցումը, որը ներառում է թե՛ դասընթացներն ու էլեկտրոնային նյութերը, թե՛ հանձնարարություններն ու քննարկումները, ինչպես նաև մի շարք այլ բաղադրիչներ: Կիրառվում են նաև գիտելիքների ստուգման առցանց եղանակներ. moodle էլուսուցման հարթակում սկսել են շահագործվել quiz և forum գործիքները:

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում գործարկվել է ՀԱԱՀ էլեկտրոնային ուսուցման հարթակի բջջային հավելվածը (Moodle): Հավելվածի կիրառման վերաբերյալ կազմվել է ուղեցույց և այն տարածվել է սոցիալական մեդիայի միջոցով և ՀԱԱՀ պաշտոնական կայքում: Ագրարային ճարտարագիտության և Պարենամթերքի տեխնոլոգիայի ֆակուլտետների ուսանողների հետ իրականացվել է հավելվածի փորձարկում և նրանց, ինչպես նաև SS կենտրոն այցելած բոլոր ուսանողներին ցուցադրվել են հավելվածի կիրառման ձևերը, դրա առավելությունները և այլն:

Թարմացվել է moodle համակարգի տարբերակը՝ այն հասցնելով վերջին կայունին:



Հաշվետու տարում էլ. ուսուցման մասով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Համագործակցելով ամբիոնների հետ՝ ուսումնական պլաններին համապատասխան դուրս են բերվել այն առարկաների ցանկը, որոնք առկա չեն հարթակում, դրանք ստեղծվել են և կցվել համապատասխան դասախոսներին:
- Դեկանատներից ստացվող ցուցակների համաձայն՝ այն ուսանողների տվյալները, որոնք գրանցված չեն հարթակում (ևոր ընդունված, վերականգնված և այլն), գրանցվել են և տրամադրվել մուտքաբառեր և գաղտնաբառեր:
- Պարբերաբար ստուգվել է, թե յուրաքանչյուր դասախոս քանի թեմա է ներբեռնել հարթակ և արդյոք դրանք կցվել են ուսանողներին:
- Պատրաստվել է ուղեցույց բջջային հավելվածից օգտվելու համար:
- Ստեղծվել և լրացվել են քոլեջում դասավանդվող առարկաները:
- Թարմացվել են եղած ուղեցույցները, ինչպես նաև պատրաստվել են նորերը:
- Դասախոսներին մատուցվել է խորհրդատվություն՝ հարցաշարերի, ֆորումների կազմման և օգտագործման համար, ինչպես նաև նրանց աշխատանքի ընթացքում ծագող բոլոր հարցերին տրվել են պատասխաններ:
- Կազմակերպվել է Moodle հարթակի ուսուցում-դասընթաց բոլոր ֆակուլտետների առաջին կուրսերի ուսանողների համար:
- Ստեղծվել է elearning.anau.am հարթակի օգտագործողների հաշիվների ստեղծման, տրամադրման, կասեցման և վերականգնման ընթացակարգ:
- ՀԱԱՀ-ի էլ. ուսուցման հարթակի կայքը թարմացվել է, ապա այն թեստավորվել է 2 անգամ: Թարմացումից և թեստավորումից հետո տեղի ունեցած փոփոխությունների մասին կազմվել է ուղեցույց և տարածվել ՀԱԱՀ-ի բոլոր դասախոսների շրջանում:

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՌԿԱ ԱԿՏԻՎ ՕԳՏԱՏԵՐԵՐԻ ԹԻՎԸ



4011

ԱՎԵԼԱՅՐԱԾ ՈՒՍՆՈՂՆԵՐԻ ՀԱԾԻՎՆԵՐ



2080

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ԴԱՍԸՆԹԱՑ



92%

ՍՏԵՂԾԱԾ ՆՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՐԹԱԿ



4421

ՓՈՓՈԽՎԱԾ ԵՎ ՀԵՌԱՑՎԱԾ ՀԱՐԹԱԿՆԵՐ



325

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ



145

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՏՈՒԳՄԱՆ ԹԵՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

SS գիտելիքի բաժինն իրականացնում է նաև հետևյալ գործառույթները.

- Թեստավորման ծրագրի շահագործում, կառավարում զարգացում
- Թեստերի կազմման կարգի ու ձևի մշակման ուղեցույցների պատրաստում
- Թեստերի հավաքագրում, ստուգում և մուտքագրման աշխատանքների իրականացում
- Թեստային քննությունների անցկացում, վերջնական տեղեկատվության ուղարկում համապատասխան դեկանատներ

Հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Առաջին և երկրորդ կուրսերի առարկաների թեստերից փոփոխվել են համապատասխանաբար **9** և **10** -ական:
- Երրորդ կուրսերի 1-ին կիսամյակի **96** թեստերից մուտքագրվել են **80**-ը, իսկ 2-րդ կիսամյակի **91** թեստերից մուտքագրվել են **8**-ը: Հարկ է նշել, որ տրամադրված թեստերը մուտքագրվել են **100%** -ով:

2021թ-ին նախատեսված կրթական ծրագրերից կազմակերպվել և անցկացվել են.

- Հեռակա բակալավրի համար՝ **719** քննություն
- Առկա բակալավրի համար՝ **581** քննություն
- Առկա մագիստրատուրայի համար **60** քննություն

2022 թվականին նախատեսվում է մուտքագրել 4-րդ կուրսերի համար նախատեսված առարկաների թեստային հարցաշարերը:



zoom.us հարթակ

Համավարակով պայմանավորված ուսումնական գործընթացի ամբողջական կառավարման, դասերի անցկացման և առհասարակ բուհի գործունեության բնականոն ընթացքի ապահովման համար Moodle և ebus համակարգերին զուգահեռ համալսարանում դասընթացների ավանդական եղանակով ուսուցման դադարեցման առաջին իսկ օրերից որոշում կայացվեց ու սկսեց լայնորեն կիրառվել zoom.us հարթակը:

Տարվա ընթացքում հեռավար ուսուցմանն անցնելու ժամանակաշրջաններում SS կենտրոնի կողմից կազմակերպվել է zoom.us հարթակով ուսումնական գործընթացի վարում, որի համար կազմակերպվել են դասացուցակի ստեղծումից մինչև դասընթացների սպասարկման աշխատանքներ:

Հարթակը թույլ տվեց դասացուցակին համապատասխան կազմակերպել յուրաքանչյուր օրվա դասերը, իսկ մնացած բաժիններին՝ իրականացնել դասերի կազմակերպման և անցկացման վերահսկողություն:

Այս հարթակի միջոցով կազմակերպվել են նաև որոշ պետական ավարտական քննություններ, ինչպես նաև ասպիրանտական թեզերի պաշտպանություններ:

Այս ամենին զուգահեռ՝ ուսաուցման հեռավար եղանակով կազմակերպման օրերին կատարվել է տեխնիկական աջակցություն:



ԳԼՆԱԿՈՐ

ՀԱՏՐ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ - ԱՌԿԱ ԿՐԹԱԶԵՎ Ազրոնոմիական ֆակուլտետ



ԱԷ I-V կուրսեր



ԱՍԳ I-V կուրսեր



ԱՏ I-V կուրսեր



ԲՊ I-V կուրսեր



ԶՏԱ, ՊԳՏ I-V կուրսեր



Կրեդիտային պարտքերի դասացուցակ



Գրադարանային գործի KOHA և library.anau.am հարթակներ


Համավարակով պայմանավորված և կարևորելով հեռավար եղանակով մասնագիտական գրականության հասանելիության հարցը՝ ՏՏ կենտրոնի կողմից այս տարի ևս իրականացվեցին **koha** գրադարանային ավտոմատացված համակարգի ծրագրային թարմացումները: Այս միջոցառումները հնարավորություն տվեցին ապահովել առավել արագ ու արդյունավետ թրաֆիկ, ինչպես նաև գրադարանավարներին ավելի մեծ գործիքակազմեր՝ գործընթացի կառավարման համար: **Library.anau.am** կայքում ևս բաց հասանելիությամբ տեղադրված 1000-ից ավելի մասնագիտական գրքերը, մեթոդական ուղեցույցները և այլ գրականությունը, հնարավորություն տվեցին ապահովել հեռավար կրթության անընդհատությունը:



<http://library.anau.am/>



<http://koha.anau.am/>




SS ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պաշտոնական **anau.am** կայքի գրեթե բոլոր էջերում կատարվել են թարմացումներ և համապատասխան փոփոխություններ: Ստեղծվել են ավելի քան **20** նոր էջեր, տեղադրվել են **150**-ից ավելի հայտարարություններ և նորություններ, **45** աճուրդային հայտարարություն:

2021թ. օգոստոսին ՀԱԱՀ պաշտոնական կայքում կատարվել է ծրագրային թարմացում (wordpress 5.7) , որից հետո ամբողջ կայքը թեստավորվել է 2 անգամ: Թարմացվել են կայքի ծրագրային **38** մոդուլներ: Արդիականացվել է նաև կայքի գրեթե բոլոր էջերի բովանդակությունը՝ մոտ **250** էջ՝ անընդհատ ակտիվ կապի մեջ գտնվելով բոլոր ստորաբաժանումների հետ: Թարմացվել է նաև ընդունելության էջը, որտեղ տեղադրվել են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, համալսարան ընդունված դիմորդների ցանկը և այլն, ինչպես նաև արխիվացվել է ոչ արդիական տեղեկատվությունը:

Համավարակով պայմանավորված՝ կայքում ավելացվել են մի շարք նոր բաժիններ ու գործիքակազմեր՝ ուսանողներին, դիմորդներին և այլ շահառուներին տեղեկատվության տրամադրման ու հավաքագրման համար:



Առցանց կրթություն

Գլխավոր - Առցանց կրթություն

- Առցանց ընդունելություն 2020-2021
- Առցանց քննություններ
- Պետական քննություններ, դիպլոմային աշխատանքի պաշտպանություններ ԱՌԿԱ
- Առցանց դիմում
- Առցանց քննությունների վերահսկման մեթոդներ
- Առցանց քննությունների վերահսկման մեթոդներ - Արհիվ
- Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական ֆոլեջի պաշտպանություններ
- Պետական քննություններ, դիպլոմային աշխատանքի պաշտպանություններ ՀԵՌԱԿԱ
- Առցանց ուղեցույցներ և տեսանյութեր

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի պաշտոնական կայքէջի հաճախումներն ըստ երկրների՝



Համալսարանի կայքի այցելուների քանակի վերաբերյալ տվյալները վերցվել են Google Analytics վեբ կայքերի վերլուծությամբ զբաղվող համակարգից:

www.anau.am



142.668



<http://persons.anau.am/>

Տարվա ընթացքում շարունակվել են persons.anau.am կայքի թարմացման աշխատանքները: Հավաքագրվել, մշակվել և կայքում ավելացվել է **106** cv: Աշխատանքները շարունակական բնույթ են կրում:

1C Հաշվապահական ծրագիր

Համալսարանի հաշվապահության 1C ծրագրի համար իրականացվել է պահուստային արխիվացման առանձին սերվերի ներդրման աշխատանք:

Թվային արխիվի ձևավորման գործընթաց

Այս տարի ևս իրականացվել են բազմատեսակ տեղեկատվության արխիվացման գործընթացներ՝ տեսանկարահանումների, ֆոտոնկարահանումների, քննությունների առցանց անցկացման, փաստաթղթերի և այլնի: Ֆինանսական և իրավաբանական փաստաթղթերի արխիվացման և կառավարման համար գործում է <https://files.anau.am/> համակարգը:


Համալսարանի կարիքների համար հաշվետու տարում ձեռք են բերվել օպերացիոն համակարգերի լիցենզիաներ, **zoom** հարթակի բաժանորդագրություններ, հոսթինգային ծառայություն, **SSL Wildcard anau.am** դոմեյնի համար՝ մեկ տարի ժամկետով:



<https://journal.anau.am/>

Գիտական հոդվածների ընդունման և կառավարման ավտոմատացված համակարգ

Հրատարակչական-խմբագրական բաժնի աշխատակիցների հետ անցկացվել է ևս 3 դասընթաց, նրանց ներկայացված առաջարկությունները և փոփոխությունները կատարվում են: Իրականացված դասընթացների արդյունքում, ստանալով հրատարակչական խմբագրական բաժնից մեկնաբանություններ, իրականացվում է հարթակի կատարելագործում:



Հարթակի ներդնումը կնպաստի աշխատանքի առավել թափանցիկությանը և արդյունավետությանը:



<https://memorial.anau.am/>

Համալսարանի մահացած ու զոհված ուսանողների, շրջանավարտների, դասախոսների հիշատակարան

Պարբերաբար հավաքվել, մշակվել և մուտքագրվել են զոհվածների և մահացածների նոր տվյալներ: Կայքում արդեն առկա են **57** հիշատակի և կենսագրական նյութեր, ինչպես նաև **40** հուշ և մոտ **500** հիշատակի մոմ:

ՆՈՐ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՎ ՆԵՐԴՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Հաշվետու տարում SSԿ-ի կողմից ներդրված նոր համակարգերը

- ✓ **Հակավիրուսային կենտրոնացված համակարգ**
- ✓ **Սերվերների և ցանցային սարքերի մշտադիտարկման (մոնիթորինգի) համակարգ**
- ✓ **Սերվերների վիրտուալիզացիա**
- ✓ **Վիրտուալիզացիայի կառավարման կենտրոնական համակարգ**
- ✓ **«Թիքեթինգ» խնդիրների գրանցման և կառավարման տոմսային համակարգ**

<https://elearning.anau.am/> 

ՀԱԱՀ-ի Moodle էլ. ուսուցման հարթակում SS կենտրոնի կողմից ավելացվել է 2 նոր դասընթաց, գրանցվել են մասնակիցները:

Գրանցվել է «TOPAS Էրազմուս+ ՀԳԶ ծրագիր «Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում»» հարթակը Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի բաժնում և «Ագրոճեռնարկատիրություն» դասընթացը Կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնում:





2021 թվականին շարունակվել են ebus համակարգի և ուսումնական գործընթացի կառավարման վարչության, դեկանատների աշխատակիցների և ամբիոնների աշխատակազմերի, այդ թվում՝ դասախոսների հետ քննարկումները և վերապատրաստման գործընթացները: Դեկանատների աշխատակիցների (այդ թվում նաև հեռակա ուսուցման) և ամբիոնների աշխատակիցների համար անցկացվել են վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ավելի քան 100 աշխատակիցներ):

Ուսումնական գործընթացի կառավարման վարչության և ֆակուլտետների աշխատակիցների հետ քննարկումների և պարբերաբար անցկացվող հարցումների և թեստավորման արդյունքում հայտնաբերվել են մի շարք թերություններ, որոնք շտկվել են և համապատասխանեցվել համալսարանում գործող նոր պահանջներին: Բաժնի աշխատակիցների կողմից զուգահեռ մշակվում և ներդրվում են բուհի կառավարման գործընթացին առնչվող նոր մոդուլներ, ինչպես նաև արդիականացվում են գործող մոդուլները: Բացի փաստացի դասընթացներից, կատարվել են բազմաթիվ խորհրդատվություններ ամբիոնների աշխատակիցների համար, ինչպես նաև կատարվել են տարբեր ենթամոդուլների ցուցադրում և ներդրում, այդ թվում նաև հեռավար կապի միջոցներով: Կատարվել է շրջայց բոլոր դեկանատներ, վերհանվել են առաջացած խնդիրները, իրականացվել դրանց լուծման աշխատանքները, իսկ խորքային առաջարկները գտնվում են մշակման փուլում:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների իրականացման համար դեկանատների աշխատակիցների թողարկող ամբիոնների հաճնաժողովի քարտուղարի համար անցկացվել են լրացուցիչ վերապատրաստումներ:

2021թ. շարունակվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ժամանակ համակարգ քննական հանձնաժողովի գնահատականների մուտքագրումը, որից հետո ավտոմատ հաշվարկվել է դրանց միջինացված ցուցանիշը: Ընդ որում, միջինացված ցուցանիշի հաշվարկի մեջ կատարվել է փոփոխություն՝ հաշվարկը կատարվում է հարյուրերորդականի ճշտությամբ և հաստատվում: Այս և մյուս բոլոր գնահատականները հետագայում օգտագործվել են դիպլոմի հավելվածում (միջուկում) ավտոմատ կերպով:

Ավտոմատ եղանակով դիպլոմների հավելվածների (միջուկների) գեներացման համար մուտքագրվել են 2016թ. (բակալավրի կրթական աստիճան) և 2019թ. և 2020թ. (մագիստրոսական կրթական աստիճան) հաստատված ուսումնական պլանների բոլոր առարկաների անգլերեն անվանումները: Մուտքագրվել և/կամ վերահսկվել են բոլոր մուտքագրված մասնագիտական կրթական ծրագրերը (դիպլոմի հավելվածի հատվածները):

Բակալավրի և մագիստրոսական կրթական աստիճանների ներդրման շարունակության ապահովման համար համակարգում մուտքագրվել է ավելի քան **150** նոր առարկա, որոնք օգտագործվել են ավելի քան **60** ուսումնական պլանների մուտքագրման համար:

Ebus համակարգի ներդրման արդյունքում արձանագրվել են հետևյալ արդյունքները՝

- ավտոմատացված եղանակով ստացվել են ուսանողների հաշվառման տվյալները՝ բացակայության արդյունքները, ամսական բացականների քանակները, ավտոմատացված եղանակով ստացվել են տոկոսային ու կիսամյակային բացականները և այլն,
- իրականացվել են վարձավճարների հետ կապված թարմացման աշխատանքներ,
- ավտոմատացված եղանակով ստեղծվել են բոլոր տեղեկագրերը (մոտ 2000 հատ). վերահանձնման տեղեկագրերը գեներացվում են ավտոմատ եղանակով, տեղեկագրերը հասանելի են թե՛ դեկանատներում, թե՛ ուսումնական վարչությունում, թե՛ լիազորված մյուս ստորաբաժանումներում,
- ավտոմատացված եղանակով ստեղծվել են 69 անհատական տեղեկագրեր,
- անհատական տեղեկագրերը ձևափոխվել և հարմարեցվել են նոր պահանջներին (տարանջատվել են անհատական տեղեկագրերը՝ տեղեկագրի տրամադրման պատճառը, կրեդիտային պարտքով ուսանողների համար ստեղծվել է բացականների տոկոսի մուտքագրման հնարավորություն և այլն),
- ավտոմատացված եղանակով ստացվել են քննաշրջանի արդյունքները, տարեկան գնահատականների մատյանները,
- Ագրոբեզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի օրինակով թեստավորվել են հաշվետվությունների 34 և 10 ձևերը,
- ավտոմատացված եղանակով կատարվել է ուսանողների շրջափոխման գործընթացը,
- ավտոմատացված եղանակով ստացվել են դիպլոմների հավելվածները (միջուկները) բակալավրի (առկա ուսուցում) և մագիստրոսական կրթական աստիճանների համար,
- թարմացվել է ամբիոնների ծանրաբեռնվածության մոդուլը,
- թարմացվել է տեղեկագրերի pdf ֆորմատով արտահանման համակարգը,
- ավտոմատացված եղանակով ստացվել են կրեդիտային (12 կրեդիտ) պարտք ունեցող ուսանողների ցանկը:

Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման նոր կանոնակարգին համապատասխանեցնելու, ինչպես նաև սխալների բացառման նպատակով բազմագործոնային համակարգով գնահատման գործոնները հանվել են առարկայական ծրագրերից, և դրանց մուտքագրման համար մշակվել է լրացուցիչ մոդուլ, կատարվել են բոլոր տվյալների մուտքագրման աշխատանքները:

Քաջկտուր և գնահատում

Բույսերի գեներտիկա ԱԳ ԱՍԳ - 2 լաբ 1 Վարյա Թեմանի Դիլանյան

Գ.Գ.	Ազգանուն Անուն Հայրանուն	2021-09-03	2021-09-10	2021-09-17	2021-09-24	2021-10-01	2021-10-08	2021-10-15	2021-10-22	2021-10-29	2021-11-05	2021-11-12	2021-11-19	2021-11-26	2021-12-03	2021-12-10	2021-12-17	2021-12-24
1	Ղազարյան Եվր Վիգեն	✓	✓	✓	✓	Ք	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
2	Սարգսյան Անի Գովինի	✓	✓	✓	✓	✓	✓	Ք	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
3	Հակոբյան Տիգրան Խորենի	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
4	Երիզանդյան Արամ Անտրանիկի	✓	Ք	✓	Ք	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
5	Գալստյան Ամբաստ Հայկրի	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
6	Կիրանույան Հայկազ Վահեի	Ք	✓	Ք	Ք	Ք	Ք	Ք	Ք	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
7	Սարգսյան Հայկր Վանդի	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓	✓
	Համառոտ	V	V	V	V	V	V	V	V	OK	V	OK	V	V	V	V	V	V

Կատարվել են նաև 2021-2022 ուստարվա նախապատրաստական աշխատանքներ

- Կատարվել են 2019թ. և 2020թ. հաստատված ուսումնական պլանների երկրորդ և երրորդ տարվա մուտքագրման աշխատանքների (թվով 37 հատ) վերահսկողություն,
- Ֆակուլտետների աշխատակիցների հետ միասին կատարվել են 2021թ. հաստատված մագիստրոսական կրթական աստիճանի առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանների մուտքագրման աշխատանքները (թվով 27 հատ),
- մուտքագրվել են նախնական բոլոր տվյալները, որոնց հիման վրա իրականացվել են ավտոմատացված եղանակով ամբիոնների ծանրաբեռնվածության ստացման և դասացուցակների մուտքագրման աշխատանքները,
- թարմացվել է դասացուցակի մուտքագրման մոդուլը (հաշվի են առնվել սեպտեմբերի 1-ից ուշ սկսվող կուրսերը, կիսամյակի ընթացքում պրակտիկաների առկայությունը և այլն),
- մուտքագրվել են բազմագործոնային համակարգով գնահատման նոր գործոնները:

Ուսումնական գործընթացների ավտոմատացման բաժնի աշխատակիցները շարունակում են ebus ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի ներդրման և զարգացման աշխատանքները: Ամբողջությամբ ավարտված են նախատեսված հիմնական մոդուլների ծրագրավորման աշխատանքները, կատարված են դրանց մի մասի արդիականացման աշխատանքներ: Դասընթացների ընթացքում ստացվել են բազմաթիվ առաջարկություններ համակարգի բարելավման ուղղությամբ, այժմ կատարվում են դրանց իրականացման աշխատանքները:

Պարբերաբար իրականացվել է նաև պահանջվող տվյալների ընթացիկ ստուգում և հսկողություն.

- առցանց անցկացվող քննությունների համար տոմսերի առկայության ապահովում՝ ներկայացված պահանջներին համապատասխան,
- տեղեկագրի և բազմագործոնային բաղադրիչների ստուգում:

Ծագող խնդիրներն ու դժվարությունները հաղթահարելիս մեծ դեր են ունեցել նաև ստեղծված ուղեցույցները: Ebus համակարգից օգտվելու համար ևս կազմվել են բազմաթիվ ուղեցույցներ, որոնք տեղադրված են համակարգում:

Թվարկված աշխատանքներին զուգահեռ բաժնի կողմից ուսումնասիրվում և պլանավորվում են այլ ծրագրային համալրումներ ուսումնական գործընթացն առավել թափանցիկ, օպերատիվ, արդյունավետ և արդի համակարգերով վերազինելու համար:

Բացի Ebus համակարգից կատարվել են նաև այլ աշխատանքներ, ստորև ներկայացված են դրացից կարևորները:

Հեռակա ուսուցման դեպարտամենտի աշխատանքի սկզբունքը դեռևս հակասում է Ebus համակարգի աշխատանքի սկզբունքին, այդ պատճառով ուսանողների բազմագործոնային համակարգով գնահատումն և դիպլոմների հավելվածների պատրաստման համար իրականացվել են աշխատանքներ:

Մասնավորապես կարատվել է.

- բազմագործոնային բաղադրիչների և հաշվարկի սկզբունքի փոփոխումից հետո տեղեկագրերում թարմացման աշխատանքներ,
- դիպլոմների հավելվածների գեներացման ֆայլերում թարմացման աշխատանքներ:

Վերոնշյալի պատճառով նշված աշխատանքներից բացի պարբերաբար անցկացվել են նաև հեռակա ուսուցման դեպարտամենտի աշխատակիցների համար լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ:

ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՅԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

SS համակարգերի սպասարկման բաժնի գործունեությունն ուղղված է համալսարանում համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկմանն ու ծրագրային ապահովմանը, տեղեկատվական ցանցի անվտանգ շահագործման ապահովմանը, համալսարանական համակարգչային լսարանների տեխնիկական, ծրագրային համակարգերի անխափան աշխատանքին և շահագործմանը, համալսարանում առկա պատճենահանող տպիչ սարքերի անխափան ու անթերի աշխատանքի, համակարգչային տեխնիկայի վերանորոգմանը, ստորաբաժանումներում ինտերնետ կապի ապահովմանը և այլն:

2021թ. բաժնի կողմից կատարված հիմնական աշխատանքների ցանկը

ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՖՈՐՄԱՏ ԵՎ ՊՐՈՑԵԼԱԿՏԻԿԱ



ՑԱՆՑԱՅԻՆ ԲԱԺԱՆԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ WIFI ԵՐԹՈՒՂԻՉՆԵՐԻ ՄՈՆՏԱՃՈՄ



ՑԱՆՑԻՆ ՄԻԱՅՎԱԾ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐ



ՔԱՐՏՐԻՉՆԵՐԻ ԼԻՑԶԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ



ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՀԱՄԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ



ՏՊԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ



Բաժնի կողմից իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները՝

- ✔ Թվով **8** լսարաններ կահավորվել են նոր պրոյեկտորներով և համակարգիչներով
- ✔ **11** լսարաններում կատարվել են համակարգչային տեխնիկայի ծրագրային թարմացում և տեխնիկական աշխատանքներ
- ✔ 2021թ. բաժինն ստացել է **64** խոշոր համակարգչային տեխնիկա, որից բաշխվել է **53**-ը
- ✔ Բաժնի կողմից կազմվել է **14** գնման հայտ՝ համապատասխան տեխնիկական բնութագրերով (100-ից ավել), որոնք տեղադրվել են էլեկտրոնային մրցույթների հարթակներում
- ✔ Համալսարանի տեսահսկման համակարգում տեղադրվել են **16** նոր տեսախցիկներ
- ✔ «Բալահովիտ» ՈՒՓՏ-ի տեսահսկման համակարգի ցանցում, կատարվել են վերանորոգման աշխատանքներ: Այս պահին ընթացքի մեջ են **3** տեսախցիկների տեղադրման աշխատանքները նոր գոմում :

Active Directory համակարգին է միացվել համալսարանի **230** համակարգիչ, մնացած համակարգիչները կմիացվեն մինչև 2022թ. մարտի 31-ը:

Տեղադրվել է կենտրոնացված հակավիրուսային համակարգ, որին միացված է **120** համակարգիչ, մնացած համակարգիչները կմիացվեն մինչև 2022թ. ապրիլի 30-ը:

Կարգաբերվել են համալսարանի ցանցային սարքավորումները, որի արդյունքում սկսվել են համալսարանի նոր ներքին ցանցի մոնտաժման աշխատանքները: Արդեն նոր ցանցին են միացված հաշվապահությունը և ՄՌԿ բաժինները, ռեկտորի գրասենյակի, ուսումնական գործընթացի կառավարման վարչության և ընդհանուր բաժնի մալուխները մոնտաժված են, շուտով կմիացվեն նոր ցանցին:





«Բալաիհովիտ» ՈՒՓՏ-ի նոր վերանորոգված վարպետաց դպրոցում և 6-րդ մասնաշենքի Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնում կատարվել են ցանցի մոնտաժման և կահավորման աշխատանքներ: Վերականգնվել և մոնտաժային աշխատանքներ է կատարվել «Բալաիհովիտ» ՈՒՓՏ-ի տեսահսկման համակարգի ցանցում, կարգավորվել են տեսախցիկների աշխատանքները:

Կարգաբերվել են համալսարանի 1-ին, 2-րդ և 5-րդ մասնաշենքերում տեղադրված աշխատակիցների հաճախումների կառավարման սարքերը, կատարվել է աշխատակիցների տվյալներ մուտքագրման աշխատանքներ ՄՌԿ բաժնի հետ միասին: Համալսարանի տարածքում ավելացվել է 16 տեսախցիկ:

ՀԱԱՀ վարժարանում կատարվել են ցանցի մոնտաժման աշխատանքներ, որի արդյունքում վարժարանը միացել է համալսարանի ներքին ցանցին:

Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տանը վերանորոգումից հետո կարգաբերվել են ցանցային սարքավորումները և մոնտաժվել են ցանցային մալուխներ: ՀԱԱՀ գյուղատնտեսական քոլեջում և «Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղում կատարվել են համակարգիչների և տպիչների ծրագրային սպասարկում, մոնտաժվել են ցանցային սարքեր և մալուխներ: Վերածրագրավորվել և կարգաբերվել են VI մասնաշենքի բոլոր համակարգիչները:



2021թ.-ին նոր կահավորված լսարանների և լաբորատորիաների ցանկ

N	Աշխատանքի անվանում	Ստորաբաժանում	Լսարանի համարը	Համակարգիչների քանակը
1	Պրոյեկտորի, Պրոյեկտորի էկրանի և համակարգչի տեղադրում	«Բալաստոպոլիտ» ՈւՓՏ-ի վարպետաց դպրոց	2-322/1	1 համակարգիչ 1 պրոյեկտոր
2	Պրոյեկտորի, Պրոյեկտորի էկրանի և համակարգչի տեղադրում	6-րդ մասնաշենք Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն	-	1 համակարգիչ 1 պրոյեկտոր
			-	1 համակարգիչ 1 պրոյեկտոր
3	Պրոյեկտորի, Պրոյեկտորի էկրանի և համակարգչի տեղադրում	2-րդ մասնաշենք մամուլի սենյակ	2-301	6 համակարգիչ 1 պրոյեկտոր
4	Պրոյեկտորի, Պրոյեկտորի էկրանի և համակարգչի տեղադրում	1-ին մասնաշենքի ընթերցասրահ	1-429	4 համակարգիչ 1 պրոյեկտոր
5	Համակարգչի տեղադրում	2-րդ մասնաշենք Թումոյի սենյակ	2-340ա	3 համակարգիչ
6	Պրոյեկտորի, Պրոյեկտորի էկրանի և համակարգչի տեղադրում	Ֆինանսահաշվային ամբիոն	1-433	9 համակարգիչ 1 պրոյեկտոր
7	Պրոյեկտորի, Պրոյեկտորի էկրանի և համակարգչի տեղադրում	Կիրառական մեխանիկայի և գրաֆիկայի ամբիոն	2-511	7 համակարգիչ 1 պրոյեկտոր

Վերանորոգված համակարգչային և արդյեկտորներով լսարանների ցանկ

N	Աշխատանքի անվանում	Ստորաբաժանում	Լսարանի համարը	Համակարգիչների քանակը
Վերանորոգված համակարգչային լսարաններ		Ֆինանսահաշվային ամբիոն	1-437ա	14
		«Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագիր	1-346	17
		Բուսաբուծության և հողագիտության ամբիոն	1-216	1
			1-217	1
		Ագրոնոմիական ֆակուլտետ	1-208	1
		Տվյալագիտության ամբիոն	2-405	1
		Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոն	2-202	1
			2-206	1
		Ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոն	2-209	1
		Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոն	2-248	1
		2-րդ մասնաշենքի ընթերցասրահ	2-425	6

Բաժինն իրականացրել է համալսարանի կողմից կազմակերպված միջոցառումների տեխնիկական սպասարկում: Տեղադրվել են բարձրախոսներ, միկրոֆոններ, արդյեկտորներ: Այս տարվանից սկսած բաժնի կողմից իրականացվում է նաև ՀԱԱՀ ակումբի բոլոր պարտականությունները: Կատավել է նաև տարատեսակ պատվոգրերի և վկայականների տպագրություն:

Բաժինն ուսումնասիրել և կազմել է համալսարանի համակարգչային տեխնիկայի պահանջարկը, գնման հայտերը, որից հետո կատարել համակարգչային տեխնիկայի պահեստավորման, բաշխման և տեղադրման աշխատանքները:

Իրականացվել է «FAST» հիմնադրամի ֆինանսավորմամբ և «GeoTAK» ծրագրերի շրջանակներում անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի տեխիկական բնութագրերի և գնման հայտերի կազմում:

2021 Թ. ՄՏԱՑԱԾ ԵՎ ԲԱԾԽՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

N	Անվանում	Ստացած քանակը	Ստորաբաժանման անվանում	Բաշխված քանակը
1	Բազմաֆունկցիոնալ տպիչ HP M227	1	Մենդի անվտանգության և կենսատեխ. լաբ.	1
2	Աշխատակիցների հաճախումների կառավարման սարք	5	1-ին մ/շ. պարետ	2
3			2-րդ մ/շ. պարետ	2
4			5-րդ մ/շ. պարետ	1
5	Պրոյեկտոր EPSON EH-TW610 LCD 1920x1080Full	3	Ագրոբիզնեսի դեպարտամենտ Գրադարան	1 2
6	Համ i3-8100Asus4GB/2400Mhz/Մոն Acer21.5 UPS1000VA	1	Գյուղատնտեսական կենդանիների մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի ամբիոն	1
7	Համ.I5-9400/8GB/256GB/-Pro300G3/ՄոնHP21.5	2	Անաս. բուժ. կրթ. գիտ. գերագ. կենտ	2
8	Բազմաֆունկցիոնալ տպիչ HP LJ Pro	1	Անաս. բուժ. կրթ. գիտ. գերագ. կենտ	1
9	EPSON EH-TW610 LCD 1920x1080FullHD	1	Անաս. բուժ. կրթ. գիտ. գերագ. կենտ	1
10	Պրոյեկտորի էկրան PL Magna 178x178սմ	2	Անաս. բուժ. կրթ. գիտ. գերագ. կենտ	2
11	Համակարգչային մոնիտոր AOC19.5m2060swda2/	7	Ագրոնոմիական ֆակուլտետի դեկանատ Համակարգչային մոնիտոր AOC-19.5m2060swd	1 1
12	Համ.Corei7-8700 Asus/8GB/2400MHZ Մոն.21.5Dell UPS1000VA	6	Բուսաբուծ. և հողագիտ. ամբիոն Անտառ. և ագրոէկոլոգիայի ամբիոն	3 3
13	Dahua NVR5232-4KS2	1	Ռեկտորի գրասենյակ	1
14	Մոնիտոր Dahua DHL24-F600	1	Ռեկտորի գրասենյակ	1
15	Պրոեկտորի էկրան 299x168	4	Գրադարան	1
16	Համ.Corei7-8700 Asus/8GB/2400MHZ	3	Տեղ. տեխ. գիտելիքի բաժին	1
17	Մոն.21.5Dell UPS1000VA		SS սպասարկման բաժին	2
18	Բազմաֆունկցիոնալ տպիչ ADF	2	Հաշվապահություն	1
19	սկաներով HP LJ Pro M227FDN		Կենսատեխ.-ի լաբոր (ինկուբատոր)	1
20	Տպիչ Canon LBP-2900 BLACK	3	Այգեպտոլաբործություն և բ.պ ամբիոն Չենակետային վարժարան	1 1
21	Դյուր. համակարգիչ HP250G7 Corei3-8145U էկրան 15,6LCD	1	Թերապիայի, վիրաբուժ. և ծննդագիտ. ամբիոն	1
22	ԷկրանClassicScutum-W180x180/1MW-LS/TԿախիչ	1	Գրադարան	1
23	Բազմաֆունկցիոնալ տպիչ Canon MF	2	Մարդկային ռեսուրսների կառ. բաժին	1
24	264DW		Գիտ. աշխ. հետ. համ. բաժին	1
25	Դյուրակիր համակարգիչ 2 LENOVO IP 5 I 5 1035G1	1	Մենդի անվտանգության և կենսատեխ. լաբ.	1
26	Մոնիտոր 22" ACER ET221QBI BLACK UM.WE1EE.001	3	Հաշվապահություն	3
27	Նոթբուք 13.3HP13Corei58265U3.9Ghz/6MB/8GB	1	SS կենտրոն	1
28	Դյուր.համակարգիչ Dell Inspiron 5502 i7-1165G7/RAM	3	Կենսատեխնոլոգիայի լաբոր. (ինկուբատոր)	3
29	Համակարգիչ մոնիտոր ստեղնաշար մկնիկ Acer Aspire C27-1655 27" Full HD i7 1165G7/16Gb/SSD512Gb/MX33 0/W	3	Կենսատեխնոլոգիայի լաբոր. (ինկուբատոր)	3
30	Պրոյեկտոր ViewSonic PA503W DLP 3600Lm 22000:1 WXGA	1	Կենսատեխնոլոգիայի լաբոր. (ինկուբատոր)	1
31	Բազմաֆունկցիոնալ տպիչ PANTUM	1	Ուսումն. գործընթացի կառավ. վարչ.	1
32	Սերվեր HPE ML110 6-Core 1.7GHZ,8.25MBDDR 3568	1	SS սպասարկման բաժին	1
33	Դյուրակիր համակարգիչ Acer Extensa 15 EX215-52-37SE i3 1005G1/4Gb/1TB/512GB/	1	Վ. Ալեքսանյան թեմայի շրջանակներում	1
34	Պրոյեկտոր Benq MX550 DLP 3600Lm	1		
35	Mikrotik ցանցային երթուղիչ CCR1036-12G-4S 10/100/1000BASE-TX/SFP	1		

ԳՈՎԱԶԴ ԵՎ ԴԻԶԱՅՆ



2020-2021 ուստարվա բակալավրիատի առկա և քվեքի ընդունելության կազմակերպման և ընդհանրապես մասնագիտական կողմնորոշման ու համալսարանի PR-ի համար SS կենտրոնի կողմից իրականացվել է գովազդային տեսահոլովակների և ծայնային հոլովակների պատրաստումն ու տարածումը, որը կազմակերպվել է սոցիալական ցանցերի, հեռուստաընկերությունների և ռադիոյի միջոցով:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում ArmNews, Yerkir Media և ATV հեռուստաալիքներով ՀԱԱՀ ընդունելության գովազդը եթեր է հեռարձակվել 2 օր՝ ընդհանուր 24 րոպե տևողությամբ:

Կենտրոնի կողմից պատրաստվել և փոփոխվել են **5** մասնագիտությունները ներկայացնող, ընդունելության վերաբերյալ գովազդային բուկլետներ, դիմորդների մասնագիտական կողմնորոշման թերթիկներ, այցեքարտեր, ֆլայերներ և այլ նյութեր, կատարվել է տարատեսակ սերտիֆիկատների, շնորհակալագրերի դիզայնի մշակում և դրանց տպագրության կազմակերպում: Հունիս-օգոստոս ամիսներին մշակվել են բոլոր մասնագիտությունները և ֆակուլտետները նկարագրող պաստառներ՝ թվով **25** հատ և տարածվել են ֆեյսբուք սոցիալական ցանցում:



Facebook սոցիալական ցանցում կատարվել են առկա և հեռակա ընդունելության, Համալսարանի կողմից կազմակերպվող դասընթացների գովազդային արշավներ: Արշավների արդյունքում ավելացել է Facebook սոցիալական մեդիայում ՀԱԱՀ-ի պաշտոնական էջի, anau.am կայքի այցելությունների և դիտումների քանակը: Ստեղծվել և տեղադրվել են **25** գովազդային արշավ: Գովազդային հայտարարությունները ցուցադրվել են **696,736** անգամ:

Կենտրոնի կողմից ֆեյսբուք սոցիալական ցանցում ներբեռնված հոլովակները, որոնք վերաբերել են ընդունելությանը, համալսարանի հաջողության ուղուն, ձեռքբերումներին, նոր ենթակառուցվածքներին և օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրին, ունեցել են **39,800** դիտում և **1,175** հավանում միայն օրգանական ճանապարհով:



Կենտրոնի կողմից 2021 թ. ընթացքում մշակվել են «Սերունդ» գինիների գովազդային roll-up վահանակ, աշխատանքի տոնավաճառի համար էլեկտրոնային և տպագիր պոստերներ, ՀԱԱՀ ֆուտբոլային թիմի տարբերանշան, Բալախովիտի մասնաշենքի արտաքին գովազդի բաններներ, Գերմանիայում ՀԱԱՀ-ի ներկայացման տեղեկատվական բաններ, ինչպես նաև տարբեր ժամանակների Ամանորյա բացիկների էլեկտրոնային և տպագրված տարբերակները մշակվել են SSԿ-ի կողմից:

Հունվար-փետրվար ամիսներին մշակվել և տպագրվել է գովազդային բիլբորդ:



ՀԱԱՀ Ֆեյսբուքյան պաշտոնական էջի հավանումների քանակը

20.12.2020

11.800

+ 34%

20.12.2021

17.866

ՏՏ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (ԱՌԴԻՏԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ)

ՀԱԱՀ ՏՏ կենտրոնի կողմից իրականացված միջոցառումներ՝ ուղղված ՏՏ և ՏԱ կառավարման կատարելագործման աշխատանքներին:

Սույն հաշվետվության հիմք է ծառայում Աուդիտի ուսումնասիրման հիման վրա ՀԱԱՀ ՏՏ կենտրոնի կողմից մշակված միջոցառումների կատարման պլան ժամանակացույցը:

1 Դիտարկել տեղեկատվական անվտանգության գործառույթի ներդրման հնարավորությունը:

Կատարված է:

Առկա է.

- ՏՏ անվտանգության քաղաքականություն

2 Համալսարանի ՏՏ ենթակառուցվածքի կառավարման համար սահմանել սկզբունքներ՝ ռիսկերի բացահայտման, գնահատման և վերլուծության մեխանիզմներով, որոնց արդյունքում հնարավոր կլինի չափել ՏՏ կառավարման արդյունավետությունը:

Կատարված է:

Առկա է.

- Էլեկտրոնային գրանցամատյանը,
- ՀԱԱՀ Տեղեկատվական ռիսկերի կառավարման կարգը
- ՏՏ անվտանգության քաղաքականության և մյուս փաստաթղթերի մեջ առկա են դրույթներ՝ ռիսկերի բացահայտման, գնահատման և վերլուծության մեխանիզմները:

3 Մշակել համապատասխան փաստաթուղթ սերվերների կառավարման (տեղադրում, կարգաբերում և սպասարկում) համար: Սերվերների համար ստեղծել անձնագրեր, որոնցում պետք է լինի բավարար տեղեկատվություն սերվերի հետագա սպասարկումն արդյունավետ իրականացնելու համար:

Կատարված է:

Առկա է.

- Սերվերների անձնագրեր՝ թվով 7 հատ
- ՀԱԱՀ սերվերային սենյակի մուտքի կանոնակարգ
- Սերվերների կարգաբերման ուղեցույցներ՝ թվով 3 հատ
- ՏՏ համակարգերի սպասարկման պլանային աշխատանքների նորմատիվներ և ժամանակացույց
- Սերվերային սենյակում գրանցամատյան, որում իրականացվում է կատարված աշխատանքների գրանցում:

Իրականացվել են.

- Բոլոր սերվերների կարգաբերման և նոր կառավարման համակարգերի ներդրման գործընթացները
- Բոլոր սերվերների անխափան սնուցման սարքերի թարմացման աշխատանքները
- Սերվերների ցանցային համակարգի տեխնիկական և ծրագրային թարմացումները:

4 Կանոնակարգել տեղեկատվության պահուստավորման և վերականգնման գործընթացը:

✓ Կատարված է:

Առկա է.

- Սերվերային տեղեկատվության պահուստավորման գործընթացի կազմակերպման և տեղեկատվության վերականգնման կանոնակարգ.
- ՀԱԱՀ արխիվացված համակարգերի, հարթակների վերականգնման և ստուգման արդյունքների մատյան
- Տեղեկանք ՀԱԱՀ-ում գործող համակարգերի տվյալների հենքի և վերբեռնված ֆայլերի պահուստավորման և ժամային գրաֆիկի վերաբերյալ
- Սերվերների և համակարգերի տեղադրման և կարգաբերման ուղեցույցներ՝ թվով 6 հատ:

Իրականացվել է.

- Տարածականորեն առանձնացված սերվերի տեղադրում և կարգաբերում ավտոմատացված համակարգով հիմնական սերվերային հանգույցից տեղեկատվության պահուստավորման համար:

5 Մշակել փաստաթուղթ կայքերի տեղադրման, կարգաբերման և սպասարկման նվազագույն անվտանգության մակարդակ ապահովելու համար: Որոշ համակարգերի (կայքեր և վեբլուծումներ) տեղեկատվական անվտանգությունը բավարար մակարդակի չէ: Դրանց պաշտպանությունը ոչ բավարար և/կամ անարդյունավետ է: Նշված կայքերը և Կենտրոնի կողմից մշակված համակարգերը երբևէ չեն անցել անվտանգության փորձարկումներ:

✓ Կատարված է:

Առկա է.

- Կայքի տեղադրման, համակարգերի և դրանցում առկա մոդուլների պարբերական թարմացումների, արձանագրությունների կազմման և ներկայացման ընթացակարգ
- Արձանագրություններ՝ կայքերի և մոդուլների թարմացման արդյունքների վերաբերյալ

Ընթացքի մեջ է.

- Կայքերի և անհրաժեշտ համակարգերի անվտանգության փորձարկման և վերլուծության կանոնակարգ:

Իրականացվել է.

- Կայքերի և անհրաժեշտ համակարգերի անվտանգության փորձարկման, վերլուծության և հաշվետվության գեներացման համակարգի ներդրումը՝ Akunetix WVS 9.5:

- Բոլոր հարթակների և մոդուլների հնարավոր թարմացումները, որոնց մասին կազմվել են համապատասխան արձանագրություններ

6 Մշակել ընդհանուր սկզբունքներ Չամալսարանի SS ենթակառուցվածքին միացվող սարքավորումների կառավարումն արդյունավետ իրականացնելու համար: Մասնավորապես, կարելի է դիտարկել «ակտիվ դիրեկտորիա» ունենալու հնարավորությունը, ինչը թույլ կտա կենտրոնացված կառավարել Չամալսարանի ցանցին միացված համակարգիչները, դրանց համար մշակել և տարածել «խմբային քաղաքականություններ»: Օգտագործողների հաշիվների կառավարումը (գրանցում, փոփոխում, կասեցում/ապակասեցում) իրականացվում է միանձնյա SS կենտրոնի կողմից՝ առանց բավարար հսկողության, որը, համաձայն ստանդարտի, պետք է իրականացվի գործառույթից անկախ միավորի կողմից: Հնարավոր են անվտանգության խախտումներ, որոնք առկա մոտեցումներով, ռեսուրսներով և ապարատածրագրային լուծումներով հնարավոր չէ արդյունավետ կառավարել:

Կատարված է:

Ներդրվել է Microsoft Active Directory համակարգը:

Առկա է.

- Microsoft Active Directory համակարգում օգտատերերի հաշիվների տրամադրումը և կառավարումն իրականացնելու, գրանցելու կանոնակարգը
- SS սպասարկման պլանային աշխատանքների նորմավորումը, ժամանակացույցը և ուղղությունները
- Համակարգչային թույլատրելի ծրագրային ապահովումների ցանկը և վերածրագրավորման և սպասարկման թերթիկները

Microsoft Active Directory համակարգում ինտեգրված են համալսարանի ցանցին միացրած համակարգիչների մոտ 50 տոկոսը:

Հնարավորություն.

- Անհրաժեշտության դեպքում հնարավոր է ներկայացնել աշխատակիցների աշխատանքի վերահսկողության վերաբերյալ հաշվետվության ներկայացում ղեկավարությանը:

7 Չկան ցանցերի պաշտպանիչ համակարգերի (firewalls) ֆորմալ կանոններ: Ադմինիստրատորի կողմից դրանց կամայական փոփոխությունների հնարավորություն և այդ փոփոխությունների հայտնաբերման միջոցների և հնարավորությունների անբավարարություն և/կամ բացակայություն: Ցանցային սարքավորումների կոնֆիգուրացիաների կառավարման բացակայություն:

✓ Կատարված է:

Առկա է.

- ՀԱԱՀ ներքին ցանցի կառուցվածքի և կարգաբերումների նկարագրության փաստաթուղթը
- ՀԱԱՀ ներքին ցանցի լոգիկա տապալոգիան
- ՀԱԱՀ ներքին ցանցի կենտրոնական հանգույցների ֆիզիկական տապալոգիան

Իրականացվել է.

- Ցանցերի պաշտպանիչ համակարգերի (firewalls) կոնֆիգուրացիաները
- Ցանցային սարքերը կոնֆիգուրացվել և կարգաբերվել են

Փոփոխություններն իրականացվում է SS գիտելիքի բաժնի ղեկավարի կողմից, և ցանկացած փոփոխություն գրանցվում է գրանցամատյանում:

8 Մշակել մոնիթորինգի կարգ՝ հստակ սահմանված գործառույթներով և պատասխանատուներով, ցանցային սարքավորումների, սերվերների գրանցած լոգերը դիտարկելու և կայքերը մոնիթորինգ անելու համար:

✓ Կատարված է մասնակի

Առկա է.

- Սերվերների և կայքերի մոնիթորինգի կանոնակարգ

Իրականացվել է.

- Սերվերների և ցանցային սարքերի մշտադիտարկման համակարգի ներդնում Zabbix 5.0.12
- Կայքերի մոնիթորինգի համակարգ freshping ներդրվել է էլեկտրոնային մատյան մոնիթորինգի արդյունքում ի հայտ եկած խնդիրների և ռիսկերի գրանցման ու դրանց վերացման գրանցամատյան

Չի ներդրվել.

Սերվերների գրանցած լոգերը դիտարկելու համակարգը օրինակ Manaeengine Event Log Analyzer, կամ նմանատիպ համակարգ, ինչը պայմանավորված է գնման գործընթացի կազմակերպման հետ:

Բացի վերոնշյալ ուղղություններից այժմ իրականացվում է.

- Առանձնացված սերվերի կարգաբերում և բոլոր ծրագրակազմերի տեղադրում՝ թեստային հարձակումներ կազմակերպելու և անվտանգության հաշվետվություններ գեներացնելու համար:
- E-buh համակարգի տեղեկատվության անվտանգության ապահովման կանոնակարգը:

Առկա է նաև.


• ՀԱԱՀ էլեկտրոնային փոստի, էլեկտրոնային ուսուցման elearning.anau.am և ums.anau.am հարթակների, օգտագործողների հաշիվների ստեղծման, տրամադրման, կասեցման և վերականգնման ընթացակարգերը:
Բացի այդ կատարվել են մի շարք միջոցառումներ, որոնք ենթակա են ցուցադրման անմիջապես համակարգիչների միջոցով:

Նոր ստեղծված փաստաթղթերի ցանկ

1. ՀԱԱՀ տեղեկատվական անվտանգության քաղաքականություն
2. Սերվերների անձնագրեր
3. ՀԱԱՀ սերվերային սենյակի մուտքի կանոնակարգ
4. ՀԱԱՀ տեղեկատվական ռիսկերի կառավարման կարգը
5. SS համակարգերի սպասարկման պլանային աշխատանքների նորմատիվներ, ծավալ և ժամանակացույց
6. Սերվերային տեղեկատվության պահուստավորման գործընթացի կազմակերպման և տեղեկատվության վերականգնման կանոնակարգ
7. ՀԱԱՀ արխիվացված համակարգերի, հարթակների վերականգնման և ստուգման մատյան
8. Տեղեկանք ՀԱԱՀ-ում գործող համակարգերի տվյալների հենքերի և վերբեռնված ֆայլերի պահուստավորման և ժամային գրաֆիկի վերաբերյալ
9. Սերվերների և համակարգերի տեղադրման և կարգաբերման ուղեցույցներ՝ թվով 6 հատ
 - 9.1. ESXI վիրտուալիզացիայի համակարգի տեղադրման ուղեցույց
 - 9.2. Centos 7 օպերացիոն համակարգի, Apache, PHP և Mysql ծրագրերի տեղադրման ուղեցույց
 - 9.3. Windows server 2019-ի և DNS տեղադրման և կարգաբերման, Active Directory-ի բարձրացման ուղեցույց
 - 9.4. Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակի տեղադրման և կարգաբերման ուղեցույց
 - 9.5. UMS համակարգի տեղադրման ուղեցույց
 - 9.6. Koha գրադարանավարի ավտոմատացման համակարգի տեղադրման և կարգաբերման ուղեցույց
10. Կայքերի տեղադրման, համակարգերի և դրանցում առկա մոդուլների պարբերական թարմացումների, արձանագրությունների կազմման և ներկայացման ընթացակարգ
11. Արձանագրություններ կայքերի և մոդուլների թարմացման արդյունքների վերաբերյալ
12. Microsoft active directory -ի (AD) համակարգում օգտագործողների հաշիվների տրամադրման և կառավարման կարգ
13. Համակարգչային ստանդարտ ծրագրային ապահովումների ցանկ և վերածրագրավորման և սպասարկման թերթիկներ
14. ՀԱԱՀ ներքին ցանցի կառուցվածք և կարգաբերումներ
15. ՀԱԱՀ ներքին ցանցի կենտրոնական հանգույցների տրամաբանական տապալոգիան
16. ՀԱԱՀ ներքին ցանցի կենտրոնական հանգույցների ֆիզիկական տապալոգիան
17. ՀԱԱՀ էլեկտրոնային փոստի, elearning.anau.am և ums.anau.am հարթակներն օգտագործողների հաշիվների ստեղծման, տրամադրման, կասեցման և վերականգնման ընթացակարգ

Աշխատանքային գրանցամատյաններ

- ✔ Զամալսարանի համակարգիչների խնդիրների գրանցման և վերանորոգման մատյան
- ✔ Տպիչների, քարտրիջների վերանորոգման և լիցքավորման մատյան
- ✔ Զամակարգչային պահեստի ելքի և մուտքի գրանցման մատյան
- ✔ Կայքերի թարմացման արդյունքների մատյան
- ✔ Տեղափոխությունների գրանցման մատյան
- ✔ Սպասարկման ուղարկված տեխնիկայի հաշվառման մատյան
- ✔ Տեղեկատվության վերականգնման արդյունքների գրանցման մատյան



ՀԱԱՀ ՏՏ կենտրոնի կողմից կատարվում է անվտանգության ապահովում, կառավարում, տեխնիկական սպասարկում, թարմացում և մոնիտորինգ ստորև նշված համակարգերի համար

N	Համակարգի նկարագրությունը
1	ՀԱԱՀ պաշտոնական կայքէջ anau.am
2	Ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգ ums.anau.am
3	ՀԱԱՀ գրադարանի կայքէջ library.anau.am
4	ՀԱԱՀ գրադարանի էլեկտրոնային կառավարման համակարգ koha.anau.am
5	ՀԱԱՀ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ mul2.anau.am
6	ՀԱԱՀ էլեկտրոնային ուսուցման հարթակ elearning.anau.am
7	ՀԱԱՀ պաշտոնական հին կայքէջի old.anau.am
8	Ուսանողի անհատական կայքէջի student.anau.am
9	Շրջանավարտների, դասախոսների և երախտավորների շտեմարան persons.anau.am
10	Ֆայլերի կառավարման համակարգեր files.anau.am docs.anau.am
11	Զերմատան ավտոմատացված կառավարման ծրագրային ապահովում agritalk.anau.am
12	Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնի կայքէջ wine.anau.am
13	Բուհական գործընթացների և մարդկային ռեսուրսների կառավարման ավտոմատացման համակարգ ERP (գտնվում է ստեղծման փուլում)
14	Tedex anau հարթակ tedx.anau.am
15	Ներքին հեռախոսհամարների VOIP համակարգ
16	Քննությունների թեստային եղանակով անցկացման համակարգ
17	Լոկալ տեղեկատվական ցանց
18	Աշխատակիցների հաճախումների կառավարման FlexAp համակարգ
19	Մասնաշենքերի տեսահսկման համակարգ
20	Հաշվապահական հաշվառման համակարգ (հին)
21	Համակարգիչների օգտատերերի կառավարման համակարգ
22	ՀԱԱՀ հիշատակարան memorial.anau.am
23	Գիտական հոդվածների ընդունման և կառավարման ավտոմատացված համակարգ journal.anau.am
24	Քննություններին ուսանողների մուտքը ավտոմատ կառավարող համակարգ examticket.anau.am
25	Ուսանողների ընդունելության հայտերի լրացման ավտոմատացման համակարգ admission.anau.am
26	Հաշվապահական հաշվառման համակարգ
27	VPN սերվեր
28	Սերվերների օպերացիոն համակարգեր
29	Տվյալների հենքերի համակարգեր